# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

**համաձայնեցին հետեւյալի մասին.**

## Հոդված 1

Համաձայնագրի 16-րդ հոդվածից «եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածով նախատեսված կարգով» բառերը հանել:

## Հոդված 2

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի խորհրդի մասին կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ, որը Համաձայնագրի անբաժանելի մասն է, կատարել հետեւյալ փոփոխությունները եւ լրացումները.

1. Կանոնադրության I բաժինը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

**«I. Ընդհանուր դրույթներ**

1.1. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից

պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) իրագործման, Համաձայնագրի մասնակիցների միջազգային կապերի ընդլայնման եւ ամրապնդման նպատակներով:

Խորհուրդը Անկախ Պետությունների Համագործակցության ճյուղային համագործակցության մարմին է եւ կոչված է իր լիազորությունների շրջանակներում կազմակերպելու ու համակարգելու ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի, կառավարությունների ղեկավարների խորհրդի, արտաքին գործերի նախարարների խորհրդի եւ տնտեսական խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը:

1.2. Խորհուրդն իր գործունեության մեջ առաջնորդվում է Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրությամբ, պայմանագրերով եւ Համագործակցության շրջանակներում ընդունված որոշումներով, «Անկախ Պետությունների Համագործակցության ճյուղային համագործակցության մարմինների մասին» Ընդհանուր կանոնակարգով եւ սույն Կանոնադրությամբ:

1.3. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է՝ համագործակցելով ԱՊՀ գործադիր կոմիտեի, Համագործակցության այլ մարմինների, անհրաժեշտության դեպքում՝ միջազգային այլ կազմակերպությունների քարտուղարությունների, ինչպես նաեւ ԱՊՀ մասնակից պետությունների պետական իշխանության մարմինների հետ:

1.4. Խորհրդի կազմի մեջ մտնում են Համաձայնագրի մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում պետական իշխանության մարմինների ղեկավարները:

Խորհրդի անդամներին փոխարինող անձանց Խորհրդի նիստերին

ուղարկելիս նրանց լիազորությունները պետք է հաստատված լինեն:

Խորհրդակցական ձայնի իրավունքով Խորհրդի կազմի մեջ է մտնում Խորհրդի քարտուղարության ղեկավարը, ինչպես նաեւ ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից Խորհրդում ունի մեկ ձայն:

1.5. Խորհուրդն իր գործունեության համար հաշվետու է ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդին:

1.6. Խորհուրդն իր աշխատանքը կազմակերպում է իր մշակած եւ հաստատած ծրագրերի հիման վրա:

1.7. Խորհուրդը յուրաքանչյուր տարի ԱՊՀ գործադիր կոմիտեին տեղեկություններ է տրամադրում իր գործունեության վերաբերյալ»:

2. Կանոնադրության IV բաժնում՝

2.1. 4.2-րդ կետի առաջին պարբերության մեջ «մեկ տարուց ոչ ավելի ժամկետով» բառերը փոխարինել «մեկ տարվա ընթացքում, եթե այլ բան չսահմանվի Խորհրդի որոշմամբ» բառերով:

2.2. 4.5-րդ կետը «կարող են մասնակցել» բառերից առաջ լրացնել «որպես դիտորդ» բառերով:

2.3. 4.6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Խորհրդի գործունեության կազմակերպչա-տեխնիկական եւ տեղեկատվական ապահովումն իրականացնում է դրա Քարտուղարությունը:

Խորհրդի քարտուղարության գործառույթները վերապահվում են ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում պետական իշխանության մարմնի աշխատակազմին, որի ղեկավարը նախագահում է Խորհուրդը՝ ԱՊՀ գործադիր կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ:

Խորհրդի քարտուղարության ղեկավարը նշանակվում է Խորհրդի նախագահի կողմից եւ Խորհուրդը նախագահող՝ ֆիզիկական կուլտուրայի եւ

սպորտի բնագավառում պետական իշխանության մարմնի ներկայացուցիչն է: Խորհրդի քարտուղարության ղեկավարի տեղակալն է ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը»:

2.4. 4.7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Խորհրդի հերթական նիստի համար Քարտուղարությունը կազմակերպում է անհրաժեշտ նյութերի պատրաստումը եւ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից երկու շաբաթ առաջ դրանցով ապահովում է Խորհրդի անդամներին»:

3. Կանոնադրությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ V բաժնով՝

**«V. Ֆինանսավորումը**

5.1. Խորհրդի նիստերի անցկացման հետ կապված ծախսերը կատարվում են ընդունող ԱՊՀ մասնակից պետության պետական իշխանության համապատասխան մարմինների հաշվին:

5.2. Խորհրդի անդամների եւ նիստի մասնակիցների գործուղման ծախսերը կատարվում են ԱՊՀ մասնակից պետությունների պետական իշխանության գործուղող մարմինների եւ կազմակերպությունների կողմից»:

**Հոդված 3**

Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին ծանուցումն ավանդապահին հանձնելու օրվանից:

Կատարված է Աշխաբադ քաղաքում, 2012 թվականի մայիսի 30-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

| | |
|---|---|
| **Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից՝** | **Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝** |

**Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

[*ստորագրություն*] *(հայտարարությամբ)*

**Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից՝**

[*ստորագրություն*]

**Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

[*ստորագրություն*]

**Ղրղզստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

[*ստորագրություն*]

**Մոլդովայի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Տաջիկստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

[*ստորագրություն*]

**Թուրքմենստանի կառավարության կողմից՝**

**Ուզբեկստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Ուկրաինայի կառավարության կողմից՝**

**Հայաստանի Հանրապետության հայտարարությունը**

**Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության նախագծի 1-ին հոդվածի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետությունն ելնում է այն հասկացողությունից, որ հետագայում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրի՝ փոփոխությունների եւ լրացումների մասին արձանագրությունները Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ կմտնեն միայն դրանց ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ, Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ նախատեսված ներպետական ընթացակարգերը կատարելուց հետո:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ՝** [*ստորագրություն*] **ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

**Ուկրաինայի հայտարարությունը**

**ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստի**
**օրակարգի 12.10-րդ կետի վերաբերյալ**

**«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության վերաբերյալ»**

**30 մայիսի 2012 թվականի** **քաղ. Աշխաբադ**

«Ուկրաինան կմիանա արձանագրությանը՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրին միանալուց հետո»:

**Ուկրաինայի վարչապետ՝** [*ստորագրություն*] **Նիկոլայ ԱԶԱՐՈՎ**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2012թ. մայիսի 30-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին 2007 թվականի մայիսի 25-ի համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**